



**Հարգելի փաստաբաններ,**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Փարիզի փաստաբանների պալատի և Փարիզի փաստաբանական դպրոցի միջև առկա շարունակական համագործակցության շրջանակներում այս տարի ևս **Հայաստանից 1 փաստաբան հնարավորություն կունենա մասնակցել Փարիզում անցկացվող "Stage International" (\$ֆրանսերեն) 8 շաբաթյա ծրագրին (դասընթացին):**

Ծրագրի ընտրական փուլն արդեն սկսված է: **Մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել** ֆրանսերենի գերազանց իմացությամբ այն փաստաբանները, որոնց տարիքը չի գերազանցում 40 տարեկանը և որոնց փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը դիմելու պահին կասեցված չէ:

**Ծրագիրն անց է կացվելու 2022 թվականի հոկտեմբերի 3-ից նոյեմբերի 25-ը (8 շաբաթ):**

Փարիզում բնակվելու և ճանապարհի բոլոր ծախսերը պետք է հոգա անձամբ մասնակից փաստաբանը: Հնարավոր է նաև որոշակի ֆինանսական աջակցության և/կամ կացարանի տրամադրում:

**Մրցույթի մասնակցության համար հայտերը և անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ներկայացվեն մինչև 2022 թվականի հունիսի 17-ը:**

**Հայտերի ներկայացման և անհրաժեշտ փաստաթղթերի հետ կապված մանրամասն տեղեկատվության կարող եք ծանոթանալ ստորև ներկայացված նկարագրում.**

**Բեռնել "Stage International" (\$ֆրանսերեն) ծրագրի նկարագիրը.**